



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

8

ԳԼՈՒԽ ԺԵ ՎԱՍՆ ԹԷ ԿՌՈՒԻ ԱՅՐ ԸՆԴ ԿԻՆՆ ԵՒ ՎՆԱՍԵՍՅԷ
ՋՆԱ

Եթէ այր զկին իւր անարգէ անդադար մախանօք, եթէ խորթ կայր ի մէջ իւրեանց եւ վասն այնորիկ նախատեն գիրարս, դատաստան լիցի. եթէ պոմնով էառ զկինն եւ զխորթերն, պարտ է համբերել, ապա թէ ոչ՝ յազգ կնոջն դարձուցեն զխորթսն: Իսկ եթէ աներկեղութեամբ եւ ժանդ բարութ այր զկին իւր հարկանէ, ձեռն կոտրէ, կամ աչք հանէ, կամ ատամն կամ ոտն կոտրէ, առցեն ի նմանէ երկու հազար դեկան, այսինքն՝ դրամ արծաթ, կրկին, քան գոր օտարն հարկանէ, քանզի թէ օտարն այդպիսի վնաս գործէ ընկերի՝ հազար դրամ տուգանք է ձեռացն, կամ ոտիցն, կամ ատամանն, կամ աչացն: Այս չորս անդամքս ի մարմին մարդոյ մի է համարեալ գինն, վասն զի մարդոյ գինն, երբ կամաւ գիրար սպանեն, չորս հազար դրամ արծաթ է. եւ այս չորս անդամս ի չորս բաժնէն մի է համարած: Իսկ իբրեւ այր զկնոջն հատանէ զձեռն, կամ զոտն, կամ զաչքն, կամ զատամն, կրկին տուգանք առցեն ի նմանէ, զի մի՛ իբրեւ զբոգ մի կալցէ զկինն իւր այրն, այլ իբրեւ զանձն իւր, եւ զկինն դարձեալ յայրն տացեն, որ զցաւսն առողջացուցանէ բժշկօք: Եւ թէ կամք իցէ կնոջն՝ բնակիցէ առնա, եւ այրն ի գոջումն գայցէ. իսկ գտուգանքն ի կինն տացեն: Եւ եթէ ի նոյն աներկեղութեան կացցէ այրն, մեկնել ի միմեանց արժան է, գուցէ մահ գործիցի ի միջի նոցա, եւ Տէրն իսկ ասաց. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ ասաց թողու զկանայս ձեր: Եւ զայս ոչ վայրապար ասաց Տէրն, քանզի յայլում վայրի վասն պոռնկութեան միայն ասաց,

եւ աստ՝ վասն խստասրտութեան: Եւ զի խստասրտութիւն բազում չարիս գործէ, լաւ է բաժանել զկինն եւ զայրն, քան թէ զիրար սպանեն, քանզի եւ Քրիստոս գնոյնն ասաց: Իսկ ընչից բաժանումն գրեալ է որ վասն ատեցողացն:

ԳԼՈՒԽ ԺԶ ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈԶ, ՈՐՔ ՅԻՄԱՐՈՒԹԵԱՄԲ ԹՈՂՈՒՆ ԶՄԻՄԵԱՆՍ

Եթէ այր, առանց պատճառի, զկինն իւր թողցէ յիմարութեամբ, եւ կինն համբերէ եւթն ամ, եւ բազում անգամ յանդիմանեն գնա ազգ կնոջն եւ դատաւորքն, եւ ոչ լսէ եւ ոչ ամաչէ, կոչեն զկինն եւ զայրն առ իրարս եւ ի բերանոյ նորա ստուգեն՝ առնուլ եւ կամ հրաման տալ կնոջն առնուլ այր: Եւ այրն ոչ առնու կին, քանի կենդանի է կին նորա. եւ ապաշխարութիւն կնաթողացն լիցի: Եւ այս դատաստանս ամենայն անպատճառ կնաթողացն լիցի. իսկ եթէ կինն խղճացեալ հրաման տացէ: Նոյն՝ եւ թէ կինն թողցէ զայրն:

ԳԼՈՒԽ ԺԷ ՎԱՍՆ ԱՐԱՆՅ ԵՒ ԿԱՆԱՆՅ ՈՒՐԱՅՈՂԱՅ

Եթէ այրն կամ կինն, վասն նեղութեան կամ վասն տուգանաց, ուրացի գՔրիստոս, մի՛ բնակեսցէ կին նորա ընդ նմա, զի մի՛ ի մոլորութիւն նորա անկցի: Իսկ եթէ զոջացի այրն եւ ասիցէ ցկինն, թէ եկ գնամք յայլ երկիր եւ դարձեալ դաւանեն գՔրիստոս, պարտ է կնոջն գնալ եւ շահել զայր իւր վասն Քրիստոսի: Նոյնպէս եթէ կինն լիցի՝ այսպէս լիցի:

ԳԼՈՒԽ ԺԸ ՎԱՍՆ ԹԷ ԱՅՐՆ ԵՒ ԿԻՆՆ ԿՌՈՒԻՒՆ ՀԵՏ ԻՐԵՐԱՅ ԵՒ ՈՒՐԱՆԱՆ ԶՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԶՀԱԻԱՏՆ

Իսկ եթէ այր, վասն քինու կնոջն իւրոյ, ուրանայ գՔրիստոս, կինն ունի զմեղս նորա, եթէ ի կնոջէն էր պատճառն: Իսկ եթէ ուրացաւ գՔրիստոս կամաւն իւրով, ինքն տացէ պատասխանի Աստուծոյ: Ապա թէ ի կնոջէն եղեւ պատճառն, եւ անդարձ մնաց այրն, արիւն նորա ի կնոջէն խնդրեսցի իրաւամբ գնով՝ հանդերձ ապաշխարութեամբ, եւ դատաստան նորա Տեառն լիցի: Նմանապէս՝ եթէ կինն անկցի յայսմ: Եւ եթէ զհիւրովին երթայցէ այր կամ կին, եւ կամ ի գետ անկեալ խեղդիցի եւ կամ՝ չվանով, կամ ընդ քար ի վայր անկանի եւ մեռանի, յումմէ

պատճառ կորստեանն եղեւ՝ նմա եւ գինք արեան լիցի վճարել: Ըստ դատաստանի կանոնաց կարծեմ եւ գերկրորդ ամուսնութիւնն խափանել:

ԳԼՈՒԽ ԺԹ ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ, ՈՐ ԶԻՐԱՐ ՍՊԱՆԱՆԵՆ

Եթէ այր զկին իւր սպանանէ վասն պոռնկութեան, արեան դատաստան լիցի ի լման, քանզի արձակել ասաց Աստուած եւ ոչ սպանանել: Իսկ եթէ զայր իւր սպանանէ կինն դեղօք կամ այլ ցաւօք, նոյն դատաստան է:

ԳԼՈՒԽ Ի ՎԱՍՆ ՅԱՆՑԱԻՈՐ ԻՇԽԱՆԱՅ ԱՌ ԹԱԳԱԻՈՐՍ ԵՒ ԱՅԼՈՑ՝ ԱՌ ՆՈՍ

Եթէ յիշխանաց եւ այլոց ի թագաւորական տանէ թագաւորին իրեանց յանցաւորք գտանիցին, եւ կամ այլ նուաստ՝ իշխանի, ինքեանք տացեն վասն անձանց իրեանց պատասխանի եւ ոչ որդիքն նոցա: Այլ եւ զժառանգութիւն հօրն թողցեն որդոցն, եւ մի՛ պատճառաւ հարց որդիք զրկիցին, զի իւրաքանչիւր ի մեղս իւր մեղցի ըստ օրինաց: Ապա թէ համախոհք իցեն միմեանց եղբարք կամ որդիք՝ կորիցեն:

ԳԼՈՒԽ ԻԱ ՎԱՍՆ ՇԻՆԱԿԱՆԱՅ

Ազատ յԱրարչէն եղեւ մարդկային բնութիւնս, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղեւ հողոյ եւ ջրոյ: Եւ որք ոչ ունիցին ջուր եւ հող, ազատ է, ուր եւ կամեսցի գնասցէ եւ բնակեսցէ, եւ ոչ է իրաւունք թագաւորաց եւ իշխանաց բռնադատել զոք կենալ ի գեղ մի կամ ի մի երկիր:

ԳԼՈՒԽ ԻԲ ՎԱՍՆ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Սպանումն եթէ լինիցի ի մէջ մանկանց, տեսցեն, թէ որ սպանեացն ի վեր քան գերկոտասան ամն իցէ, արեան պարտական է եւ այնպէս տուժեսցի, իսկ եթէ մենաստան եւ տասն՝ զկէսն տուժեսցեն, իսկ ի վայր քան զտասն՝ յերից մինն լիցի: Եւ թէպէտ եւ յայլ մեղս զինգետասան ամացն յիշէ, սակայն մեղք արեանն են այսոքիկ:

ԳԼՈՒԽ ԻԳ ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՑ, ԹԷ Ի ԽԱՂՍ ՎՆԱՍԵՆ ՋԻՐԱ

Յորժամ մանկունք ի խաղս գմիմեանս վնասիցեն, թէ՛ պատահմամբ, թէ՛ ցասմամբ, որ կոտրեաց՝ պարտ է տալ զվարձս բժշկացն եւ զխափանման բանիցն, եւ թէ ոչ բժշկի՝ զգինս զգայութեանցն, եւ թէ մեռանի՝ զգին արեանն: Ապա գտարիքն ի սպանութեան կանոնս քննեցեն, ի քսան եւ երկու համարն:

ԳԼՈՒԽ ԻԴ ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՑ, ԹԷ Ի ՋՈՒՐՍ ԽԵՂԴԵՆ ՋԻՐԱՐՍ

Ի ջուրս լողալով մանկունք գմիմեանս խեղդեն, եթէ պարզմտաբար ի խաղս եւ եթէ քինու ցասմամբ. եթէ կամաւ առնիցեն՝ գինք արեան լիցի, եւ եթէ ակամայ՝ կէսն: Իսկ տարիքն քննեցի այնմ, որ խեղդեացն գնա:

ԳԼՈՒԽ ԻԵ ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՑ, ՈՐ Ի ԳՐԱԽՍ ՍՊԱՆԱՆԵՆ ՋԻՐԱՐՍ

Եթէ մանկունք գրաւ դնեն ընդ իրար, թէ վազէ ի վայր եւ կամ ընդ դժարս եւ ընդ ձիւն սահելով եւ այլ այսպիսի, եթէ պատահի մեռանել՝ քննեցեն զամբն, որ զգրաւն եղ, եւ կէս տուգանք լիցի ի վերայ նորա, թէ վնասեալն աւելի ամօք իցէ, քան զայն, որ զգրաւն եղ, ապա թէ այլ պակաս՝ կիսոյ կէսն, որպէս տասն տարոյ կամ պակաս: Եւ եթէ կատարելոց իրդ դիպեցեն, նովիմբ դատեցին:

ԳԼՈՒԽ ԻԶ ՎԱՍՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ, ԹԷ ՎԱՅՐԱՊԱՐ ԳՐԱԻ ԴՆԵՆ

Սովոր են երիտասարդք ոմանք գմիմեանս վայրապար շարժել՝ բառնալ ինչ ծանունս, որպէս քարինս եւ այլ այսպիսիս, եւ վնասիլ եւ վնասել գմիմեանս: Եթէ որ շարժեացն ինչս ետ ի գրաւու յայտնի, եւ յայնմանէ ոք պատրեալ վնասեցաւ, կէս վնասու արեան լիցի, ըստ որում բանի յանցոյց, մանաւանդ թէ պատրեալն աւելի ամօք իցէ, եւ խափանածոյն եւ բժշկութեանն տուժեցի: Եւ զայս եղաք, զի մի՛ վայրապար մահ գործեցի յոմանց:

ԳԼՈՒԽ ԻԷ ՎԱՍՆ ԳԻՆԱՐԲՈՒԱՑ ԵՒ ՆՈՅԻՆ ՎՆԱՍՈՒՑ

Ի մէջ գինեխում մարդկան եթէ ընդ միմեանս կռվին, եւ կոտորի ձեռն կամ այլ անդամ, պարտի բժշկել եւ զպակասութիւն բանիցն լնուլ, եւ թէ մահ հանդիպի կամաւ՝ արեան գինք առցեն անպակաս. եւ այլ ընկերքն, որ անդ էին, նոքա այլ տուգանօք են ըստ չափոյն: Եւ թէ ակն կամ ատամն խլեսցի, զգինն առցեն հազար դրամ. եւ թէ ոտն եւ ձեռն կոտորի եւ անբժշկելի մնայ, նոյն հազար դրամ եւ այս:

ԳԼՈՒԽ ԻԸ ՎԱՍՆ ՇՆԱՅՈՂԱՅ ԵՒ ԱՅԼՈՅ ՉԱՐԱԳՈՐԾԱՅ

Յորժամ շնայ ոք ընդ կին, որ այր ունի, եթէ կամաւ կնոջն է եւ եթէ լրբութեամբ առն, ըստ Օրինացն մահու արժանի է: Եւ այլք ի դատաւորաց զայսպիսեաց զձեռն եւ զժածուկ մարմինն կտրեն, եւ կարգ արուագիտացն եւ անասնապղծացն է. եթէ ի դատաստան գայ՝ տուգանքօք փրկեսցին եւ մի խրատի: Եթէ այլազգի հանդիպի յայս գործս հետ քրիստոնէի կնոջ, առանց ամենայն պատճառի հատանեն զժածուկն եւ զկինն խրատեսցեն զքիթն կտրելով: Իսկ եթէ քրիստոնեայ մարդ գայրի կին խաբեսցէ եւ պղծեսցէ գնա, կամ առնու կին գնա, կամ տայ հարիւր դրամ արծաթ կնոջն, երբ այլ կին ոչ ունենայ այն մարդն, որ շնացաւ: Նա թէ եւ այլ մեծատուն իցէ այրն եւ կինն՝ նոյն, եւ տուգանքն յաւելցին:

ԳԼՈՒԽ ԻԹ ՎԱՍՆ ԿՈՒՍՈՒՅ, ՈՐ ՉԻՅԵՆ ԽՕՍԵԱԼ

Զկոյս աղջիկ, որ խօսալ լինի առն, եւ այլ ոք գայ եւ բռնութեամբ պղծէ գնա, դատաստան առնակնոջն է, ըստ որում օրինակի եւ իցէ: Ապա թէ գտանիցէ ոք աղջիկ կոյս, որ չիցէ առն խօսեալ, եւ բռնաբար ննջիցէ ընդ նմա, տացէ այրն, որ ննջեացն ընդ նմա, հօր աղջկանն հարիւր դրամ արծաթ, եւ նորա լիցի կին. եւ մի՛ իշխեսցէ արձակել գնա: Այդ ըստ Օրինացն է, գնոյն եւ մեզ լիցի՝ անբաժանելի առնուլ գնա, ապա թէ ոչ կամեսցի՝ ըստ արժանեացն եւ տուժն լիցի:

ԳԼՈՒԽ Լ ՎԱՍՆ ՈՐՔ ԶԿԱՆԱՅՍ ԲԱՄԲԱՍԻՅԵՆ ՍՈՒՏ, ԹԷ ՉԳՏԱԻ ԿՈՅՍ

Եթէ ոք առնուցու կին եւ ատիցէ գնա եւ ստութեամբ բամբասիցէ, թէ կոյս չէ աղջիկն, քննեսցեն ի ձեռն կանանց՝ եթէ ստի այրն, խրատեսցեն զայն գանիւ եւ տուգանեն հարիւր դրամ արծաթ՝ ըստ Օրինացն. գնոյն եւ մեք միաբան այնմ, եւ նմին եղիցի կինն, եւ մի՛ արձակիցէ: Ապա թէ ճշմարիտ իցէ այրն, աղջիկն մահու

արժան է ըստ Օրինացն, եւ մեք տամք այնպիսոյն՝ արձակիլ ի նմանէ առնն, եւ թէ կամք իցեն՝ բնակիցեն, զի բազում ինչ վրիպանօք գործի կուսից, եւ զի ոչ ի տան առն եղեւ անարգութիւնն: Եւ այրն, թէ արձակէ՝ ամուսնասցի այլ կնոջ, եւ կինն այր առցէ, զի ոչ ընդ օրինօք առնն էր, երբ շնացաւ. եւ եթէ ոչ կամեսցի առնուլ վասն իւր սուտ բամբասանացն, տուգանք դիցեն ի վիրայ նորա, որպէս եւ գրեալ է ի գիրս, որ վասն արանց եւ կանանց: